

ԾՐԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է ապահովել Հայաստանի գիտական և տեխնոլոգիական զարգացումը, այդ թվում՝ տեխնոլոգիական արդյունաբերության ստեղծումը, աջակցել գիտնականներին, երիտասարդներին, տեխնոլոգիաների ոլորտի մասնագետներին, ոչ առևտրային կազմակերպություններին և այլ անձանց կատարել ֆունդամենտալ և կիրառական հետազոտություններ, մշակումներ ու գյուտեր, օգտագործել սեփական գիտական ու հետազոտական ներուժը Հայաստանի գիտական և տեխնոլոգիական զարգացման ուղղությամբ, տեխնոլոգիական նորարարությունների համար զարգացնել միջավայր, մոբիլիզացնել հայաստանյան ու միջազգային գիտական հանրությունների գիտական, տեխնոլոգիական ու ֆինանսական ռեսուրսները, աջակցել հայկական գիտական համայնքի վերականգնմանը և գլոբալ հարթակում դրա մրցունակությանը, Հայաստանը տարածաշրջանային տեխնոլոգիական ու նորարարական կենտրոն դարձնելու նպատակով ներդնել գիտության և տեխնոլոգիայի լավագույն կրթական փորձը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Ֆիզիկական անձինք, ոչ առևտրային և բարեգործական կազմակերպություններ, նվիրատվություն և նվիրաբերություններ կատարողներ՝ ներառյալ Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամը՝ ի դեմս հիմնադիրներ ՌՎՎԶ հիմնադրամի, Նուբար Աֆեյանի, Արթուր Ալավերդյանի, «Այբ» կրթական հիմնադրամի և «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի
4.	Ծրագիր կատարողը	Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Հակոբ Հակոբյան 3) Իրավաբանական հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Հակոբ Հակոբյան 3, ՀՎՀՀ՝ 02662248
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում, բնագավառը՝ կրթական և գիտական

6.	Ծրագրի բյուջեն	4,161,533,105 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Հայաստանում և արտերկրում բնակվող հայերը, գիտության և տեխնոլոգիաների ոլորտի հետ առնչվող անձինք, Հայաստանի Հանրապետության և միջազգային գիտական համայնքի ներկայացուցիչները, գիտության, տեխնոլոգիայի և նորարարության ոլորտում ներդրումներ իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի փետրվարի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների զարգացման ծրագիր, որը ներկայացված է առաջիկա երեք տարվա համար
		<p>1. «Գիտության և տեխնոլոգիաների հրեշտակ ներդրողների ցանց», գնահատված ծախսեր՝ 11,345,333 դրամ: Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST) նախաձեռնությամբ ստեղծված Գիտության և տեխնոլոգիաների հրեշտակների ցանցը (STAN) հիմնադրվել է 2018 թվականին: Ծրագրի նպատակն է Հայաստանում «Հրեշտակ» ներդրողների ցանցի աշխատանքների կազմակերպումն ու համակարգումը, որը ներառում է ստարտափերի ընտրություն, ստարտափերի համար իրենց գաղափարների ներկայացման հարթակի ստեղծում, «Հրեշտակ» ներդրողների և ստարտափերի հանդիպումների լուսաբանման և հանրայնացման, «Հրեշտակ» ներդրողների ցանցի առաջխաղացման ծառայությունների մատուցում, ինչպես նաև նպաստել բիզնես հրեշտակների գործունեության լավագույն միջազգային փորձի տարածմանը Հայաստանում: Մինչև օրս Գիտության և տեխնոլոգիաների հրեշտակների ցանցին ներկայացվել են ավելի քան 120 ստարտափեր, որոնցից 11-ը ստացել են ներդրումներ բիզնես հրեշտակներից: Ցանցից ներդրում են ստացել այնպիսի startup-ներ, ինչպիսիք են Denovo Sciences-ը, manot-ը, HopShop-ը և doodooc-ը:</p> <p>Նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:</p>
		<p>2. Գլոբալ ինովացիոն ֆորում, գնահատված ծախսեր՝ 382,760,000 դրամ:</p> <p>Միջոցառման նպատակն է համագործակցության հարթակ ստեղծել տեղացի և օտարերկրյա գիտնականների, տեխնոլոգիաների ոլորտը ներկայացնող ձեռներեցների, ուսանողների և այլ ոլորտների ներկայացուցիչների</p>

	<p>համար՝ դրանով իսկ խթանելով տեխնոլոգիական ծրագրերի զարգացումը Հայաստանում և դրա սահմաններից դուրս:</p> <p>Նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:</p> <p>3. «ԸԴՎԱՆՍ» (ADVANCE) դրամաշնորհային ծրագիր, գնահատված ծախսեր՝ 821,917,493 դրամ:</p> <p>ADVANCE դրամաշնորհային ծրագրի նպատակն է Հայաստան բերել առաջատար մասնագետների փորձը գիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության, մաթեմատիկայի (ԳՏՃՄ) ոլորտներում, աջակցել Հայաստանում գործող հետազոտողներին իրականացնել գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում մրցունակ հետազոտություններ: Ծրագիրը կամուրջ է միջազգային հեղինակավոր գիտնականների և Հայաստանի հետազոտական խմբերի միջև նորարարական հետազոտական ծրագրերի վրա աշխատելու համար: Մինչև օրս ձևավորվել է 4 գիտահետազոտական խումբ միջազգային առաջատար մասնագետների ղեկավարությամբ և Հայաստանի հետազոտողների մասնակցությամբ: ADVANCE դրամաշնորհային ծրագրով նախատեսված նպատակներին հասնելու համար կարող են իրականացվել ներմուծման, առուվաճառքի, հանրայնացման, տրանսպորտային, կացության, տեխնիկական, վարձատրության, վարձակալության և ծառայությունների մատուցման այլ գործարքներ:</p> <p>Նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:</p> <p>4. «Բի-Օն» (“B-On”) կենսատեխնոլոգիական նախատիպավորման լաբորատորիա», գնահատված ծախսեր՝ 175,786,396 դրամ:</p> <p>«Բի-Օն» կենսատեխնոլոգիական նախատիպավորման լաբորատորիան տարածաշրջանի առաջին փորձարարական լաբորատորիան է: «Բի-Օն»-ի առաքելությունն է օգնել կենսատեխնոլոգիական թիմերին կյանքի կոչել իրենց նորարար գաղափարները և ստեղծել աշխարհը փոխող նոր բեկումնային տեխնոլոգիաներ: «Բի-Օն»-ը տրամադրում է կենսատեխնոլոգիական լաբորատոր սարքավորումներ ու համատեղ աշխատանքի տարածք: Լաբորատորիայում գործում են կենսատեխնոլոգիական ստարտափների հիմնմանն աջակցող ինկուբացիոն ծրագրեր, ինչպես նաև մենտորության, վերապատրաստումների և սեմինարների հատուկ ծրագրեր ուսանողների, հետազոտողների և ստարտափների համար:</p>
--	--

<p>«Բի-Օն»-ը հիմնադրվել և գործում է Հայաստանի գիտության և տեխնոլոգիայի հիմնադրամի (FAST) հովանու ներքո՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հետ համագործակցությամբ:</p> <p>Նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:</p>
<p>5. «Արհեստական բանականության սերունդ» ավագ դպրոցի ծրագիր, գնահատված ծախսեր՝ 301,342,250 դրամ:</p> <p>Այս ծրագիրը կազմում է «Արհեստական բանականության սերունդ» բազմամակարդակ ծրագրի մի մասը և նպատակ ունի ավագ դպրոցից բարձրացնելու աշակերտի պատրաստվածությունը գիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության, մաթեմատիկայի (ԳՏՃՄ)՝ մասնավորապես արհեստական բանականության ոլորությամբ կրթությունը շարունակելու և այս ոլորտում հետազոտական աշխատանքներում ներգրավելու համար:</p> <p>Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համատեղ, և նախատեսում է սերտ համագործակցություն ոլորտի կառույցների և մասնագիտական խմբերի հետ:</p> <p>Ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության ավագ դպրոցների աշակերտների համար կստեղծվեն խորացված կրթական ծրագրեր մաթեմատիկայի, համակարգչային գիտության գիտելիքների և հմտությունների ամրապնդման համար, ինչպես նաև կներդրվեն արհեստական բանականության ոլորտում մասնագիտանալու համար նախապատրաստական դասընթացներ: Այս նպատակով կիրականացվեն ուսուցչական անձնակազմի վերապատրաստումներ, նոր մասնագետների ներգրավում դպրոց: Ծրագիրը նախատեսում է նաև մասնագիտական կողմնորոշման իրականացում այս ոլորտի վերաբերյալ գրագիտության բարելավման և գիտնականի գործունեության ու դերի ընկալման փոփոխության նպատակով:</p> <p>Ծրագրի շրջանակներում մարզերում կհիմնվեն գերազանցության կենտրոններ՝ զինված համապատասխան նյութերով և տեխնիկայով, որոնք հնարավորություն կընձեռնեն գործնականում կիրառել սովորած հմտություններն ու գիտելիքները:</p> <p>Ծրագիրն ի սկզբանե կպիլոտավորվի Հայաստանի Հանրապետության ընտրված շուրջ 10 դպրոցներում՝ սկսած 2023 թվականի սեպտեմբերից:</p> <p>Նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:</p>

<p>6. «Կրթության վերախմաստավորում» (Reimagining Education), գնահատված ծախսեր՝ 27,005,426 դրամ:</p> <p>Տեխնոլոգիական զարգացումներին համապատասխան կրթություն ապահովելու ու ապագա ստեղծարարների ու գիտնականների սերունդի ձևավորման համար՝ Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամը մշակել է նոր ծրագրի գաղափար, որը ենթադրում է ներկայիս կրթական համակարգի վերախմաստավորում ու նոր համակարգի կառուցում, որն ավելի վաղ տարիքից, ավելի կարճ ժամկետում և արագ տեմպով կհանգեցնի ցանկալի արդյունքին: Այն ենթադրում է նոր ուսումնական ծրագիր, ընդլայնված և վիրտուալ իրականություններից կազմված փոխակերպված ուսումնական միջավայր, վերանայված ուսուցչի, փոխակերպված ու խաղերի վրա հիմնված մեթոդաբանության ներդրում:</p> <p>Որպես ծրագրի առաջին փուլ կիրականացվի նեյրոնագիտության ուղղությամբ խորքային հետազոտություն՝ բացահայտելու երեխայի ընկալման գործընթացը, դրա վրա ազդող միջավայրը և պայմանները:</p> <p>Հետազոտության արդյունքում կձևավորվեն պիլոտային նախագծեր՝ փորձարկվելու Հայաստանում և հաջողության դեպքում արտահանվելու այլ երկրներ:</p> <p>Նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:</p>
<p>7. «Սայնովա» (SciNova), գնահատված ծախսեր՝ 70,590,000 դրամ:</p> <p>Ծրագիրը մշակվել է հետևյալ նպատակներով՝</p> <ul style="list-style-type: none"> - հայ ուսանողներին զինել գիտական հետազոտության իրականացման արդի հմտություններով, - զարգացնել հետազոտության արդյունքները նորարարության արդյունքների վերածելու կարողությունները, - վերափոխել գիտության հանդեպ հայ երիտասարդության վերաբերմունքն ու ցույց տալ գիտության գործնական նշանակությունն ու շոշափելի օգուտները: <p>2020 թվականին Մեծ Բրիտանիայի Ասթոն (Aston) համալսարանի հետ համատեղ մշակվել են «Գիտական հետազոտության մեթոդաբանություն» ու «Գիտական նորարարությունների առևտրայնացում» կրթական ծրագրերը՝ ներգրավելով նաև Հայաստանից ոլորտի առաջատար մասնագետներին:</p> <p>2021 թվականին ծրագրերը փորձարկվել են Հայաստանի ազգային ազրարային համալսարանում՝ ներգրավելով մագիստրոսական ծրագրում սովորող 25 ուսանողների, 11 դասախոսների: Իրականացվել են նաև դասախոսական կազմի վերապատրաստումներ 5 տարբեր բուհերից 39 դասախոսների համար:</p>

<p>Փորձարկման փուլի ավարտին Հայաստանի Հանրապետության 3 բուհերում (Երևանի պետական բժշկական համալսարան, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա գիտակրթական միջազգային կենտրոն, Հայաստանի ազգային ագրարային համալսարան) ներդրվել են SciNova ուսումնական ծրագրերը: 2022 թվականից մեկնարկել է SciNova ծրագրի տարածումը՝ թիրախավորելով Հայաստանի Հանրապետությունում բնագիտամաթեմատիկական ուղղվածություն ունեցող բոլոր բուհերը: Ծրագրի շարունակականության ապահովման և արդյունավետ ներդրման համար իրականացվել են բոլոր բնագիտամաթեմատիկական ուղղվածություն ունեցող համալսարաններից դասախոսական կազմի վերապատրաստումներ, լրամշակվել են ծրագրերն ու մշակվել օժանդակ նյութեր:</p> <p>Մասնավորապես՝</p> <ul style="list-style-type: none"> - Ամերիկյան «Ջեթփաբ Սայնթիֆիք Քոմյունիքեյշնզ» ՍՊԸ-ի (JetPub Scientific Communications LLC) հետ համագործակցությամբ լրամշակված կրթական ծրագրերի հիման վրա մշակվել են դասընթացավարների երկլեզու (հայերեն և անգլերեն) ձեռնարկներ: - Իրականացվել են շուրջ 15 բարձրագույն ուսումնական հաստատությունների (ներառյալ մարզային մասնաճյուղերը) 60 դասախոսների վերապատրաստման դասընթացներ: <p>Առաջիկայում նախատեսված են անհատական աշխատանքներ յուրաքանչյուր համալսարանի հետ վերոնշյալ ծրագրերի ներդրման ուղղությամբ՝ ելնելով յուրաքանչյուր բուհի կարիքներից և կրթական առաջնահերթություններից: Նախատեսված են նաև լրացուցիչ աջակցություն «Գիտական նորարարությունների առևտրայնացում» թեմայի դասավանդման համար:</p> <p>Նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:</p>
<p>8. «Ադապտացիոն նորարարական կամպուս» (Adaptive Innovation Campus, AIC), գնահատված ծախսեր՝ 21,700,000 դրամ:</p> <p>Ծրագիրը նախագծված է որպես համագործակցության կենտրոն, որտեղ գյուտարարները, գիտնականները, ուսանողները, ձեռնարկատերերը, բիզնեսի մասնագետները և ներդրողները հավաքվում են՝ զաղափարներ ստեղծելու խանգարող նորարարության համար, փորձարկել դրանք առաջադեմ լաբորատոր ենթակառուցվածքում և ստեղծել առևտրային ապրանքներ և լուծումներ: AIC-ն կնպաստի տարածաշրջանային նորարարությանը՝</p>

	<p>նպաստելով գիտության և տեխնոլոգիաների վրա հիմնված ընկերությունների ստեղծմանը Հայաստանում և նրա սահմաններից դուրս:</p> <p>AIC-ն կստեղծվի որպես նորարարական էկոհամակարգի լիարժեք գործող միկրոտիեզերք, որն ունի անհրաժեշտ ինտելեկտուալ, ցանցային և ֆինանսական կարողություններ՝ կատալիզացնելու գիտական առաջընթացը և տեխնոլոգիական նորարարությունը:</p> <p>Նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:</p> <p>9. Աշխատավարձի և ֆիզիկական անձանց կողմից ծառայությունների մատուցման գծով ծախսեր, այդ թվում՝ վարչական աշխատակազմի, գիտական ու տեխնոլոգիական մասնագետների աշխատավարձ՝ 1,655,050,999 դրամ, ինչպես նաև քաղաքացիաիրավական ծառայություններ՝ 79,200,000 դրամ:</p> <p>Նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:</p> <p>10. Տարածքների (ապրանքանյութական արժեքների պահեստավորման համար), գրասենյակների (վարչական աշխատակազմի և գիտական ու տեխնոլոգիական ոլորտի մասնագետների աշխատանքների համար), դրանց վերանորոգման, դիզայնի, կահավորման, ներքին հարդարման աշխատանքներ: Գրասենյակային գույքի, սարքավորումների ձեռքբերում, պահնորդային, մաքրության և այլ տեխնիկական-մասնագիտական ծառայություններ, կոմունալ վճարներ, այդ թվում՝ նաև հեռախոսակապի և ինտերնետ հասանելիության ծախսեր, տնտեսական և գրասենյակային այլ ծախսեր՝ 226,494,202 դրամ:</p> <p>Նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:</p> <p>11. Շարժական գույքերի վերանորոգման, ընթացիկ սպասարկման ծառայություններ՝ 6,612,888 դրամ:</p> <p>Նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:</p> <p>12. Խորհրդատվական ծառայություններ, այդ թվում՝ իրավաբանական, հաշվապահական, թարգմանչական և մասնագիտական, հետազոտական և այլ համանման ծառայություններ՝ 57,865,200 դրամ:</p> <p>Նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:</p> <p>13. Գործուղման ծախսեր՝ հյուրանոցային ծառայություններ, տրանսպորտային ծառայություններ, ավիատոմսեր և օրապահիկներ, որը նախատեսված է կազմակերպչական աշխատակազմի, ծրագրի ղեկավար անձնակազմի համար,</p>
--	--

	<p>աշխատակիցների միջազգային և տեղական գործուղումներ (ծրագրի արտասահմանյան գրասենյակներ, հանդիպումներ արտասահմանյան գործընկերների հետ, ծրագրի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման, փորձի փոխանակման նպատակով)՝ 250,236,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:</p>	<p>14. Տրանսպորտային ծառայություններ, վառելիք, լոգիստիկ ծախսեր, մաքսային, բրոքերային և այլ միջնորդական ծառայություններ՝ 25,250,760 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:</p> <p>15. Հանրային իրազեկման և մարքեթինգային ծախսեր, տպագրական և դիզայներական ծառայություններ, այդ թվում՝ բուկլետների, այցեքարտերի, տոմսերի, հրավիրատոմսերի, հուշանվերների և այլ փաստաթղթերի գնում, տպագրություն և ձևավորում, ՎԵԲ կայքի մշակում՝ 25,680,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:</p> <p>16. Աշխատակազմի առողջության ապահովագրության ծախսեր՝ 21,256,158 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:</p> <p>17. Բանկային ծառայությունների գծով ծախսեր՝ 1,440,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:</p>
	Ընդհանուր	4,161,533,105 դրամ
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների նկարագիրը	<ol style="list-style-type: none"> 1. Գիտական և տեխնոլոգիական մշակումներ ու գյուտեր անելու, ֆունդամենտալ և կիրառական հետազոտություններ անցկացնելու համար անհրաժեշտ սարքավորումների, համակարգչային տեխնիկայի ձեռքբերում՝ 95,947,240 դրամ, 2. Գիտական և տեխնոլոգիական մշակումներ ու գյուտեր անելու, ֆունդամենտալ և կիրառական հետազոտություններ անցկացնելու համար անհրաժեշտ սարքավորումների, համակարգչային տեխնիկայի ներմուծում՝ 172,524,360 դրամ, 3. Անհրաժեշտ համակարգչային ծրագրային ապահովման լիցենզիաների ձեռքբերում՝ 36,442,800 դրամ,

		<ol style="list-style-type: none"> 4. Միջոցառումների կազմակերպում, այդ թվում՝ հյուրանոցային, բանկետային և սննդի տրամադրման, ավիատոմսերի ձեռքբերման, տարածքների վարձակալության, տեխնիկայի վարձակալության, համաժամանակյա թարգմանության ձեռքբերման գծով ծախսեր՝ 655,016,118 դրամ, 5. Հանրային իրազեկման և մարքեթինգային ծախսեր՝ տպագրական և դիզայնի արտադրական ծառայություններ, վեբ կայքի մշակում, ապահովում՝ 122,778,466 դրամ, 6. Մասնագիտական խորհրդատվական ծառայություններ, այդ թվում՝ թարգմանչական և մասնագիտական, հետազոտական, աուդիտորական և հաշվապահական, իրավաբանական և այլ համանման ծառայություններ՝ 127,661,719 դրամ, 7. Վարչական գրասենյակների, տարածքների վարձակալություն, կոմունալ, պահնորդային, սանիտարական աշխատանքների, կապի, ինտերնետային ծառայությունների վճարներ՝ 175,302,202 դրամ, 8. Տրանսպորտային ծառայություններ, լոգիստիկ ծախսեր, մաքսային, բրոքերային և այլ միջնորդական ծառայություններ՝ 37,860,760 դրամ, 9. Շարժական գույքերի սպասարկման, վերանորոգման ծառայություններ՝ 6,612,888 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	<ol style="list-style-type: none"> 1. 475,794,626 դրամ՝ վարչական աշխատակիցների աշխատավարձ, 2. 175,302,202 դրամ՝ գրասենյակի վարձակալություն և կոմունալ վճարներ և գրասենյակային այլ ծախսեր, 3. 6,612,888 դրամ՝ շարժական գույքերի սպասարկման և վերանորոգման ծառայություններ, 4. 37,608,000 դրամ՝ խորհրդատվական ծառայություններ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	<ol style="list-style-type: none"> 1. Հայաստանի Հանրապետության նախագահ (նախատեսվում է համագործակցություն գիտատեխնոլոգիական ոլորտի զարգացմանն ուղղված մի շարք նախաձեռնությունների շրջանակներում), 2. Հայաստանի Հանրապետության վարչապետ և աշխատակազմ (համագործակցություն գիտակրթական տարբեր ոլորտներում հանրային քաղաքականության մշակման, ինչպես նաև տեխնոլոգիական և նորարարական էկոհամակարգում բարեփոխումների ծրագրման և իրականացման շրջանակներում),

		<p>3. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (կրթական և գիտական ոլորտում այնպիսի ծրագրերի իրականացում, ինչպիսիք են օրինակ՝ ADVANCE դրամաշնորհային ծրագիրը, «Արհեստական բանականության սերունդ» ծրագիրը),</p> <p>4. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն (համագործակցություն սթարթափային էկոհամակարգի բարելավմանն ուղղված ծրագրերի շրջանակներում),</p> <p>5. Այլ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ (համագործակցություն կրթական և համայնքային զարգացման ծրագրերի շրջանակներում):</p>
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրություն	<p>Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:</p>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱԴԵՏ

Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ